

յիս աւուրց ինչ օրհնեցիև ֆահսնայ. եւ յիս ամաց ինչ (1613) աղերսիւ եւ հարկաւ յսնննեցիև ի նա գլխնախ հայոց եւ զամենայն հոգս եկեղեցւոյն: Եւ խօճայք դարձան ի տուն իւրեանց:» (ՀԱ. 1934 էջ 554-557):

Դարանաղցի ալ իր ժամանակագրութեան մէջ (էջ 326) կը հաստատէ թէ Հալէպի մէջ հանգանակութիւն կատարուելէն յետոյ հաւաքուած գանձը «միաբանութեանք ամենեցուն առեալ զնացիև, յԵրուսաղէմ եւ հոն «հասուցիև զամենայն զպարսսև եւ ոչ ամաց եւ ոչ ինչ, միևնչեւ ի մի յունադիողսև» (Խոյն. էջ 327):

Լեհացի եւ Դարանաղցի ինչպէս կը տեսնուի համաձայն են իրարու, միայն թէ Լեհացի կը ճշդէ անոնց թիւը ըսելով որ միայն 20 հոգի էին, Ամթեցի ենկի Խօճայի գլխաւորութեամբ:

Սաւալան (էջ 569) առանց յիշելու թէ ինչ աղբիւրէ քաղած է՝ կը յիշէ անոնց գլխաւորներէն միայն տասը որոնք են.

1. Խօջա Զաքարէ Վանեցի
2. Խօջա Սուքիաս »
3. Խօջա Առաքել »
4. Խօջա Շէխիջան Բաղէշցի
5. Խօջա Թուժաջան Ամթեցի
6. Խօջա Բաղդասար Ուռհայեցի
7. Խօջա Պետրոս Հալէպէն